ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հետհեղափոխական Հայաստանը ներկայումս տնտեսական զարգացման լուրջ հեռանկարներ ունի: Այսօր մենք պետք է գտնենք զարգացման և բարգավաճման մեր բանաձևը՝ հաշվի առնելով այն բոլոր իրողություններն ու սահմանափակումները, որոնք ունեցել և դեռևս ունենալու ենք նաև առաջիկայում: Մեր երկրում ընթանում են հակամենաշնորհային, հակակոռուպցիոն և նմանատիպ այլ երևույթների վերացման լրջագույն միջոցառումներ ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչարարական համապատասխան գործունեության իրականացմամբ: Այսօր գերարդիական խնդիր է նաև դեպի Հայաստան մեծ հայրենադարձության կազմակերպումը: Մեզ անհրաժեշտ է նաև ներդրումային թռիչք: Իմանալով, թե ինչպիսին է մեր երկիրն այսօր, մենք չենք կարող «դանդաղ շտապել». այդ գաղափարը հնացել է, ուղղակի պետք է «խելամիտ շտապել» և շտկել անցած տարիներին չարվածը:

Հիմնաբառեր. *տնտեսական զարգացում, սինգապուրյան հրաշք, հայրենադարձություն, մարդկային կապիտալ*
JEL: J24, O1, O2

Աշխարհի տնտեսական և սոցիալական պատմության ողջ ընթացքում տարբեր երկրներում ապրող ժողովուրդները, ազգերը և ազգությունները միշտ էլ անցել են պայքարի դժվարին ճանապարհ: Այդ ընթացքում որևէ հաջողություն և դրական արդյունք ձեռք չի բերվել առանց պայքարի և հակա-

մարտությունների: Եվ եթե այդ հակամարտությունների նախաձեռնողներն ունեցել են նաև մեծապետական նկրտումներ և բռնապետական տրամադրություններ, ապա բազմահազար և միլիոնավոր քաղաքացիներ, մեղմ ասած, տուժել են՝ կորցնելով հարազատներին, տուն ու տեղը, ունեցվածքը, տեղահանվել պապերի բնօրրաններից և զրկվել կենսապահովման տարրական պայմաններից:

Այսօր էլ ականատես ենք լինում Սիրիայում և մի շարք այլ տարածքներում նմանատիպ երևույթների, և հաճախ մոլորակի հզոր պետությունները կամ նրանց միությունները մի որոշակի ժամանակահատված անզոր են լինում կասեցնելու դիմակայությունները՝ փորձելով դադարեցնել գոնե մարդկային բազմահազար կյանքերի կորուստները: Իհարկե, սա ցավալի է, բայց փաստ է:

Մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը, արդեն 27 տարի անկախ պետություն է: Սա լրջագույն արժեք է, և մենք պետք է փայփայենք ու պահպանենք, բայց նաև այդ հիմքի վրա ընտրենք զարգացման ուղի և ունենանք աննախադեպ ձեռքբերումներ: Մենք գիտենք մեր և՛ ուժեղ, և՛ թույլ կողմերը՝ հատկապես արտաքին մարտահրավերները, որոնցից մեկը նորանկախ մեր պետության գոյության ողջ ընթացքում անբաժան ուղեկից է: Արցախի Հանրապետությունը միշտ պետք է լինի ազատ և անկախ, ժամանակի ընթացքում նաև ճանաչված մյուս երկրների կողմից: Եվ դրա մասին գիտեն յուրաքանչյուր հայի ընտանիքում, դրա համար ջանք է գործադրում յուրաքանչյուր հայ:

Սա մեր առաջին և հիմնական ազգային գաղափարն է՝ ներկան և ապագան, որի շուրջ աշխարհի 10 մլն-ից ավելի հայեր համախմբված են:

Իհարկե, օրակարգում է նաև բարգավաճ հզոր և մրցունակ Հայաստանի կառուցումը: Այդ գաղափարի շուրջ պետք է համախմբվեն աշխարհի ողջ հայությունը, հայ ժողովրդի բարեկամները, և որպեսզի ավելի շատ մարդիկ համախմբվեն, պետք է մենք ավելի ու ավելի մեծ թվով զբոսաշրջիկների հրավիրենք մեր երկիր, որ նրանք ավելի լավ ճանաչեն մեզ և մեր հայրենիքը, որտեղ շատ բան կա ցույց տալու:

Մոտ երկու ամիս առաջ մեր երկրում տեղի ունեցան արմատական քաղաքական և հանրային փոփոխություններ:

Ժողովուրդն իրականացրեց անցնցում՝ «թավշյա հեղափոխություն»:

Ժողովուրդը հասկացավ, որ եթե այս դեպքում էլ հապաղի, կարող է հետագայում շատ թանկ վճարել չարածի համար: Տեղի ունեցավ համազգային համախմբում իրավիճակի փոփոխության համար, որը հաջողությամբ պսակվեց:

Ժողովուրդը հասկացավ, որ ինքը հիմնական և միակ գործոնն է, որպես այս երկրի տեր, թեև 15–20 տարի խոր հիասթափություն ուներ, և դրա հետևանքով հարյուրհազարավոր մարդիկ ժամանակավորապես լքել էին երկիրը:

Ներկայումս մեր երկրում ընթանում են հակամենաշնորհային, հակակոռուպցիոն և բացասական այլ երևույթների վերացման լրջագույն միջոցառումներ ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչարարական համապատասխան գործունեության իրականացմամբ: «Օրենքի առաջ բոլորը հավասար են, և այլևս չեն լինելու արտոնյալներ» կարգախոսը այսօր ի գործ է, և հենց սա է հույս ներշնչում, որ առաջիկա տարիներին մեր հանրապետությունում

կստեղծվեն հստակ նախադրյալներ տնտեսության և հանրային կյանքի մյուս ոլորտների համակողմանի զարգացման համար:

Բնականաբար, ամեն երկիր ինքը պետք է գտնի այն դեղատոմսը, բանաձևը որի միջոցով առավել արագ և արդյունավետ առաջընթաց կունենա՝ հաշվի առնելով ժողովրդի բնավորությունը, ավանդույթները և տեղական այլ առանձնահատկություններ, սակայն գործող կառավարությունը պետք է լրջորեն ուսումնասիրի նաև իր համար ընկալելի և ընդունելի միջազգային փորձը, որը հնարավոր է բնականոն տեղայնացնել սեփական երկրում:

Այդ առումով մենք ողջունում ենք «սինգապուրյան հրաշքը», որը 1963 թ. մինչև հիմա ամբողջ աշխարհին ապացուցեց, որ 716 կմ^2-ի վրա կարելի է 30 տարվա ընթացքում ձևավորել գերզարգացած, կարգ ու կանոնով երկիր:

Այդ հրաշքի հեղինակներն են Սինգապուրի հայր Լի Կուան Յուն և ժողովուրդը:

Իսկապես, Լի Կուան Յուին և Սինգապուրի ժողովրդին հաջողվել է անել անհնարինը. այսօր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է ավելի քան 60 000 ԱՄՆ դոլար:

Ինքնատիպ երկիր է Սինգապուրը: Քաղաքը բաժանված է 3 մասի՝ արդյունաբերական, տուրիստական և բնակելի, որոնք իրարից առանձնացած են կանաչ գոտիներով:

Ծխախոտի մնացորդը փողոցում նետելու համար տուգանքը 500 ԱՄՆ դոլար է, չկա գողություն, գրպանահատություն 5 մլն բնակչություն ունեցող երկրում:

Ժամանակին ամեն ինչ անում էին յուրաքանչյուր ներդրողի համար: Զարգացած է բիոտեխնոլոգիան, էլեկտրոնիկան, քիմիական արդյունաբերությունը, տուրիզմը և այլ ոլորտներ, չնայած Սինգապուրը չունի բնական ռեսուրսներ:

Այս երկրում կյանքի կոչվեցին պրագմատիկ և ռացիոնալ գաղափարներ, և, ինչպես ասում էր հայտնի գործիչ Հոն-Սույ Սանը, «աշխարհը պարտավոր չէ մեզ կերակրել, մենք չենք կարող կերակրվել աղքատությամբ»:

Ջարոնգ արդյունաբերական քաղաքը մի տարածք է, որտեղ գործում են տարբեր արդյունաբերական ձեռնարկություններ, Սինգապուրը ստեղծել է զբոսաշրջության իր հայտնի նշանը՝ Մերլիոնը՝ առյուծը ջրահարսի թևերով:

Սինգապուրում մեծ ծավալով աճել են բանկային և ֆինանսական միջնորդությունները (աշխարհում 4-րդն է Լոնդոնից, Նյու Յորքից, Շանհայից հետո), ինչպես նաև միջնորդական առևտուրը և խաղատնային բիզնեսը:

Սինգապուրի օդանավակայանը աշխարհում երկրորդն է. տարեկան ընդունում է շուրջ 40 մլն ուղևորի:

Բյուջեի շուրջ 20%-ը ծախսվում է կրթության վրա, մեքենա ձեռք բերելը շատ թանկ է, թանկ է նաև ավտոմեքենաների համար տրվող լիցենզիան՝ 150%, սակայն շատ զարգացած է հասարակական տրանսպորտը, որն օգնում է թեթևացնել խցանումները:

Աշխատանքից, այսինքն՝ 18^{00}-ից հետո աշխատողները սեփական ավտոմեքենաներով պետք է տեղափոխեն նաև իրենց գործընկերներին:

Սրանք բարձր գաղափարական որոշումներ են, որ ժողովուրդն իրագործում է, չնայած ամբողջ երկիրը տեսանկարահանող սարքերի հսկողության տակ է:

Մենք պետք է գտնենք զարգացման և բարգավաճման մեր բանաձևը: Այո, հաշվի առնելով այն բոլոր իրողությունները, սահմանափակումներն ու

տխուր փաստերը, որոնք մենք ունենալու էինք, պետք է գիտակցենք, որ դրանց մի մասն ունենալու ենք նաև առաջիկայում:

Փակ է մեր սահմանների երկու երրորդը, չունենք ծովային ելք, ունենք լոգիստիկ բարդություններ, փոքր ներքին շուկա:

Բայց, միևնույն է, մենք հավատում ենք, որ կգտնենք օպտիմալ ճանապարհ:

Մեր հիմնական կապիտալը մարդկային գործոնն է՝ իր մտավոր ներուժով և տաղանդով:

Մենք գտնվում ենք Եվրոպայի և Ասիայի 200 միլիոնանոց ԵԱՏՄ-ի և 80-միլիոնանոց Իրանի խաչմերուկում: Եվ, վերջապես, մենք նորարար և աշխատասեր ենք:

Ժողովրդական պայքարն անհրաժեշտ է ներդրումների և ներդրողների համար: Յուրաքանչյուր ներդրում պետք է անվտանգ լինի և պաշտպանված: Դա հնարավոր է, եթե չլինեն արտոնություններ մի խումբ մարդկանց համար:

Պայմաններ պետք է ապահովվեն բիզնես սկսելու համար՝ վարկային տոկոսադրույքների իջեցում: Դա հնարավոր է: Չափազանց կարևոր է հարկատեսակների կրճատումը և հարկային վարչարարության գերպարզեցումը:

Պետք չէ մարդու մտավոր ներուժը հակադրել հարստությանը և ֆինանսական ռեսուրսներին, չպետք է հակադրել նաև աղքատին ու ունևորին, պետական և մասնավոր հատվածները, Սևանի էկոլոգիական խնդիրը և Արարատյան դաշտի ոռոգման ջրի կարիք ունեցող գյուղացիներին: Մեզ խիստ անհրաժեշտ է հանրային համաձայնությունը: Դա հեշտ չէ ապահովելը, բայց անհնար էլ չէ:

Նախկին կառավարիչները պետք է ընդունեն իրենց բացթողումները ճիշտ այնպես, ինչպես Եվրոպական շատ երկրներում է:

Մի՞թե զարգացած, այդ թվում՝ Եվրոպական երկրներում ներկայումս չկան լուրջ հիմնախնդիրներ: Իհարկե, կա՛ն: Եվրոպական խորհրդի որոշումները շատ երկրներ հաճախ չեն կատարում՝ իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար. օրինակ՝ Լեհաստանը, Հունգարիան և այլ երկրներ:

Եվրոպայում թևածում է միլիոնավոր փախստականների խնդիրը: Դրա լուծման համար միայն ֆինանսները բավարար չեն, քանի որ այդ երկրներում տեղի են ունենում բարոյական, ժողովրդավարական, սոցիալական լրջագույն տեղաշարժեր, որոնք փոխում են քաղաքակրթության և կյանքի մասին անցած և ներկա պատկերացումները: Բնականաբար, որևէ երկիր համաձայն չէ իր ազգային դիմագծի կորստի հաշվին զարգացնել տնտեսությունը և հանրային կյանքը: Սակայն ժողովրդավարական արժեքները պարտավոր ենք պահպանել. դա է մեր զարգացման հիմքը:

Թուրքիայում վերջին ընտրությունների նախօրյակին ընդդիմության հետ կապերի համար պետական հատվածից աշխատանքից ազատվել էր 100 հազար մարդ, բերման էին ենթարկվել 50000-ը: Եվրոպական դատարանը 9800 դեպքի առնչությամբ վարույթներ էր հարուցել:

Սա մեր հարևան տարածքներում է, և ավելի վատ է Ադրբեջանում: Մենք, ժողովրդավարության առումով, տարածաշրջանում պետք է լինենք առաջիններից մեկը, միաժամանակ մշտապես պահպանենք մեր զգոնությունը՝ հարևան երկրներից սպասվող վտանգների հետ կապված: Այսպիսով՝ պետք է ունենանք զարգացած ռազմարդյունաբերական համալիր, էներգետիկա, տեղեկատվական տեխնոլոգիաների բարձր մակարդակ, բարձրա-

կարգ լեռնամետալուրգիա, զարգացած գյուղատնտեսություն, շուկայական ենթակառուցվածքներ, համարժեք գիտակրթական համակարգ:

Այսօր գերարդիական խնդիր է նաև դեպի Հայաստան մեծ հայրենադարձության կազմակերպումը: Այո՛, այսօր իրական պայմաններ են ձևավորվում աշխարհի տարբեր երկրներից հազարավոր մեր հայրենակիցների՝ հայրենիք վերադարձի և այն հզորացնելու համար: Դա օդի ու ջրի պես անհրաժեշտ է: Հայրենիքը սպասում է: Մենք գիտակցում ենք, որ յուրաքանչյուր հայ ընտանիքի վերադարձի հետ, բազմարկչային էֆեկտով, մեր երկիրը կընդարձակվի, հոգու ջերմության հետ կամրանա հավատը մեր մշակույթի և հասարակության, նաև այն մարդկանց հանդեպ, ում հետ շփվել են հայրենիքից բացակայելու ժամանակ:

Մեզ անհրաժեշտ է նաև ներդրումային թռիչք: Դա հնարավոր կլինի, եթե մեր Կառավարությունը պիլոտային օրինակներով համամասնակցություն ունենա տարբեր գերակա ներդրումների նախագծերին, կրի ներդրողների ռիսկերի մի մասը:

Ներդրողների հետ պետք է կարողանալ խոսել և պայմանավորվել:

Ամփոփելով նշենք, որ ամենից լավ մենք գիտենք, թե ինչպիսին է մեր երկիրը, և դա այդպես է յուրաքանչյուր երկրի և նրա քաղաքացու դեպքում: Ուստի, հենց դա հաշվի առնելով, մենք այլևս չենք կարող «դանդաղ շտապել». այդ գաղափարը հնացել է, ուղղակի պետք է «խելամիտ շտապել» և շտկել անցած տարիների բացթողումները:

Օգտագործված գրականություն

1. Parliament.am
2. Armstat.am
3. Gov.am
4. https://ru.wikipedia.org/wiki/%D0%9B%D0%B8_%D0%9A%D1%83%D0%B0%D0%BD_%D0%AE
5. https://www.segodnya.ua/lifestyle/fun/singapur-recept-procvetayushchego-gosudarstva-ot-li-kuan-yu-614925.html

МИКАЕЛ МЕЛКУМЯН
Заместитель председателя Национального собрания РА,
доктор экономических наук, профессор

Перспективы развития постреволюционной Армении.– Постреволюционная Армения имеет серьезные перспективы для экономического развития. Сегодня нам нужно найти формулу развития и процветания, учитывая все ограничения, которые у нас были и которые могут быть в ближайшем будущем. В настоящее время в нашей стране осуществляются серьезные антимонопольные, антикоррупционные и другие подобные мероприятия как посредством юридической, так и административной деятельности. Сегодня сверхважной задачей является организация большой репатриации в Армению. Нам также нужен инвестиционный полет. Зная, какой является наша страна на сегодняшний день, эта идея устарела, нам просто нужно смириться и исправить прошлые неудачи.

Ключевые слова: *экономическое развитие, сингапурское чудо, репатриация, человеческий капитал.*
JEL: J24, O1, O2

MIKAEL MELKUMYAN
Vice Speaker of National Assembly of the RA,
Doctor of Economics, Professor

Prospects for the Development of Post-Revolutionary Armenia.– The post-revolutionary Armenia has serious prospects for economic development. Today we need to find out the formula for development and prosperity, taking into consideration all the restrictions we have had and we will face some of them in the future. Currently, serious anti-monopolistic, anti-corruption and other similar measures are being taken in our country, both through legislative and administrative activities. Today, the big repatriation to Armenia is also an urgent problem. We also need an investment flight. Knowing what our country is today we can t slowly move, this idea is outdated, we just have to rush wisely and correct past failures.

Key words: *economic development, Singapore miracle, repatriation, human capital.*
JEL: J24, O1, O2